

ՀԱՅԿ. ՍՍՌ. ԱՌՈՂՋԱԳԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՆԻՍՏՐԱԻԹՅՈՒՆ

ԳՈՑ. Ե. ԲՍԼԱՆԹԱՐՅԱՆ

**ՄԱՐԴՈՒ ԺՎՈՒՆԵՐԸ
ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ԳԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ**

ՀԱՅԳԵՏՐԱՆ

ԴՈՅ. Ե. ԲԱԼԱՆԹԱՐՅԱՆ

ՄԱՐԴՈՒ ԺՃՈՒՆԵՐԸ
ԵՎ, ՆՐԱՆՑԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԷԼՈՒ
ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ

ՀԱՅՊԵՏՀՐԾՏ

1949

Д-р. Е. КАЛАНТАРЯН
Глисты человека и меры
по защите от них
(на армянско языке)
Аргиз, Ереван, 1949 г.

ՄԱՐԴՈՒ ՃԻՃՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑԻՑ ՊԱՇՏՊԱՆՎԵԼՈՒ
ՄԻՋՈՅՆԵՐԸ

Ճիճուները մարդու շատ հին և վտանգավոր թշնամիներն են՝ վաղուց է անցել այն ժամանակից, երբ մատդիկ կարծում էին, թե ճիճուները վնասակար չեն: Այժմ բոլորն էլ շատ լավ գիտեն, որ ճիճուները խակահան պարագիտներ են և ապրում են մարդու մարմնի հաշվին և մեծ վնաս են հասցնում նրան: Ճիճուները աստիճանաբար հյուժում են մարդու օրգանիզմը և առաջացնում արյան պակասություն ու մի շարք ներվային խանգարումներ:

ՃԻՃՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՊԱՏՃԱՍՏՎԱՆԱՍԸ

Ճիճուները տարածված են ամբողջ աշխարհում, վարակելով թե կենդանիներին և թե մատդկանց: Բայց մի քանի երկրներում, ինչպես օրինակ Իրանում, Թյուրքիայում, Ճապոնիայում, Չինաստանում, Հարավային Ամերիկայում և Աֆրիկայում բնակչությունն առանձնապես խիստ վարակված է ճիճուներով:

Յարական իշխանություն ժամանակ, Ռուսաստանում, թեև մարդիկ շատ էին տառապում ճիճուներից, բայց նրանց դեմ պառքարի ոչ մի միջոց ձեռք չէր առնվում: Սովետական իշխանությունը լուրջ ուշադրություն դարձրեց ճիճվային հիվանդությունների վրա և պարագիտային ճիճուների դեմ սկսվեց սխտեմատիկ համառ պայքար ծավալվել:

Մեր Միության շատ քաղաքներում բացվեցին ճիճվային հիվանդություններն ուսումնասիրող հատուկ ինստիտուտներ, բաժիններ ու լաբորատորիաներ պարզելու համար, թե ինչպիսի ճիճուներով և ինչ աստիճանի է վարակված բնակչությունը. անց են կացվում մասսայական հետազոտություններ: Ծիճվային հիվանդությամբ տառապողների համար բացվել են ամբուլատորիաներ, հատուկ հիվանդանոցներ: Միության շատ տեղերում ամեն տարի կատարվում է բնակչության մասսայական բուժում՝ կյոբ և տափակ ճիճուների դեմ: Առաջին հերթին ուշադրություն է դարձվում երեխաների առողջացման վրա, որոնց առանձնահատուկ վնաս են հասցնում ճիճուները: Երեխաների համար ճիճուները շատ ավելի վտանգավոր են: Այս բոլոր միջոցառումների շնորհիվ ճիճվային հիվանդությունները Սովետական Միության մեջ զգալիորեն պակասել են: Մակայն ֆաշիստների դեմ մղած Հայրենական Մեծ պատերազմի ժամանակաշրջանում, երբ որոշ չափով վատացան կյանքի սանիտարական պայմանները, երբ մեր երկրի արևմուտքից դեպի արևելք բնակչության զգալի տեղաշարժ կատարվեց, որի հետևանքով էլ մարդկանց մասնակի կուտակվածություն առաջացավ. այդ ժամանակամիջոցում ճիճվային հիվանդությունները նորից սկսեցին շատանալ:

Մեզ մոտ, Հայաստանում, վերջին տարիներին նրկատվել են դեղերի միջոցով ճիճուները կծիկներով թափվելու և ճիճվային հիվանդությունների հաճախակի ծանր դեպքեր:

Բերենք մի քանի օրինակներ: 1944 թ. գիշերը 3-րդ հիվանդանոց բերվեց 22 տարեկան մի կին, որը գանգատվում էր փորի սուր ցավերից, սրտախառնոցից,

փսխումից: Հիվանդը ծանր վիճակումն էր, անհանգիստ, գունատ, աչքերը փոս ընկած: Բժիշկները դիագնոզեցին աղիքային անանցանելիություն և առանց ուշացնելու, հենց նույն գիշերը, վիրահատեցին հիվանդին:

Վիրահատման ժամանակ պարզվեց, որ ամբողջ աղիքները լցված են հսկայական քանակությամբ ասկարիդներով (կլոր, խոշոր ճիճուներ, ինչպես ժողովուրդն է ասում՝ «գանդուրաճիճու»), իսկ աղիքի մի մասը այնպես էր կախված ու փքված, որ արտաքին տեսքով նման էր հաստ երշիկի: Այդ աղիքից հանվեց 835 հատ ճիճու: Վիրահատումից հետո, երբ հիվանդը սկսեց կազդուրվել, նրան դեղ տվին ճիճուների դեմ, որից հետո նրանից թափվեց ևս 408 հատ: Այսպիսով, այդ կնոջից թափվեց ընդամենը 1242 ասկարիդ: Մեկ և կես ամիս պառկելուց հետո, հիվանդը դուրս գրվեց առողջացած:

Երկրորդ դեպք: 1947 թ. շրջանից 3-րդ հիվանդանոց բերվեց 11 տարեկան մի տղա: Նա Երևան էր եկել հիվանդանոց ընդունվելուց մի ամիս առաջ: Գանգատվում էր փորի սուր ցավերից («սանջուլից»), սրտախառնոցից, փսխումից: Նման ցավերից նա գանգատվելիս է եղել մի ամիս առաջ, որն անցել է փորին ջեռակ դնելուց: Այժմ ցավերը քանի գնում սաստկանում են, տաք ջուրն այլևս չի օգնում: Բժիշկը գտնում է աղիքների խցանում: Փորը խիստ փքված է և շատ ցավոտ: Փորի մեջ շոշափվում է ճիճուներից գոյացած ուռուցքը: Հիվանդը ծանր վիճակումն է: Կատարված վիրահատումից պարզվեց, որ բարակ աղիքները լցված են ասկարիդներով, առանձնապես պինդ խցանված էր աղիքների մի մասը, մոտ մի մետր երկարությամբ: Բժիշկը առանց աղիքը բանալու զգուշությամբ շփելով այն, ճիճուներին քշեց դեպի վեր ու վար և կարեց

փորի կարվածքը: Վիրահատումից հետո առ ջին երեք օրը հիվանդն իրեն այնքան վատ էր զգում, որ վախենում էր թե չի ապրի: Նրան տվեցին ճիճուների դեղ, ճիճուներն սպեցին թափվել: Հիվանդն իրեն լավ զգաց: Վիրահատումից հետո նա պառկեց ևս 10 օր և այդ ժամանակամիջոցում նրանից թափվեց 256 ասկարիդ: Հիվանդը դուրս գրվեց բուրոփին առողջացած:

Երրորդ դեպք: 1946 թ: Օրթոպեդոսյի և վերականգնման-վիրաբուժական ինստիտուտի բերվեց 22 տարեկան մի հիվանդ, որը փորի վրա ուռուցք ուներ: Ուռուցքը հեռացվեց: Վիրահատումից անմիջապես հետո հիվանդի վիճակը շատ վատացավ, առաջ եկավ ընդհանուր թուլութուն, փորի սուր ցավեր և նկատվեցին անանցանելիության երևույթներ: Հիվանդի փոստման ժամանակ սկսեցին դուրս գալ ճիճուներ: Բժիշկն ըստիպված եղավ երկրորդ վիրահատումը կատարել, որից պարզվեց, որ այս հիվանդի ալիքները լցված են եղել ճիճուներով: Հիվանդին սի քանի անգամ արյան փոխներարկում կատարեց, հետո, սրա աղիքի մեջ մի փաթրիկ անցք բացեցին, որտեղից սկսեցին դուրս թափվել մեծ քանակությամբ ճիճուներ:

Վիրահատման ժամանակ և հետո հիվանդն իրեն վատ էր զգում և շատ թույլ էր: Չնայած ձեռք առած բոլոր միջոցառումներին, հիվանդը վրահատման հետևյալ օրը մահացավ: Հիվանդի մահվան պատճառը պետք է բացատրել հետևյալ կերպ: Ուռուցքը հեռացնելու առաջին վիրահատման ժամանակ տեղի է ունեցել աղիքների և վերջինների մեջ գտնված ասկարիդների մախանիկական զրգոում: Ճիճուներ կծիկ ևս դարձել, որից առաջացել է աղիքների խցանում և ճիճուները մասնակի ոչնչացում, սրանցից առաջացած թուլյուն ներս

է ծծվել ու թունավորել հիվանդի առանց ասն էլ թու-
լացած օրգանիզմը, որը է պատճառ է եղել հիվանդի
մահվան:

Ոչ պակաս ծանր էր սրանից մի քանի տարի առաջ
մանկական կլինիկայում եղած մահացու դեպքը: Շրջա-
նից մանկական հիվանդանոց բերին 10 տարեկան մի
աղջիկ: Հիվանդութունն սկսվել էր դաշտում մի ինչ
որ կանաչեղեն ուտելուց 4—5 օր առաջ: Նույն օրը
երեկոյան նրա մոտ ստաջացել են խիստ փոքրի ցավեր՝
ընթ փսխում, գլխացավ: Աղջիկն աստիճանաբար թու-
լացել է, վիճակը ծանրացել: Լուծն ու փսխումը սկսել է
սաստկանալ: Առաջացել են ցնցումներ, որի պատճառով
աղջկան Երևան են բերել: Կլինիկայում հիվանդն ունե-
ցել է արյունախառն փսխում, ցնցումներ, հաճախ գի-
տակցութունը կորցրել է: Հիվանդանոց բերելուց 2 օր
հետո աղջիկը մահանում է: Հերձման ժամանակ նրա
աղիքներում հայտաբերվեցին 200-ից ավելի ասկարիդ-
ներ, որոնցից շատերը կենդանի չէին: Այս դեպքը հե-
տևանք է նրան, որ աղջկա աղիքներում ասկար դնեորը
ստակել էին (հավանական է դաշտում կերած կանաչից),
որոնց արտադրած թուլյնը թունավորել էր աղջկա օր-
գանիզմը՝ առաջացնելով փսխում, ցնցումներ, գիտակ-
ցության աղոտացում և այլն: Ճիճվային հիվանդու-
թյունները ծանր դեպքերի օրինակներ շատ կարելի է
բերել: Այս հիվանդութունը ժամանակին բուժելու
շնորհիվ լավ հետևանքներ է ունենում:

Ինչ խոսք, որ ժամանակին կատարված վիրահա-
տությունը փրկում է հիվանդին, բայց հազվադեպ չեն
այնպիսի դեպքեր, երբ բժշկին ուշ դիմելու պատճառով՝
այլևս հնարավոր չի լինում նրան օգնել ինչպես պետքն է:

Ինչու՞ն է ճիճուների պատճառած վնասը և ինչու՞

է նա պայմանավորվում: Այդ վնասը պայմանավորված է նրանով, որ ճիճուները մարդու օրգանիզմում ապրելով սնվում են նրա հաշվին: Ճիճուները կամ ուտում են այն սնունդը, որ մարդն ընդունում և մարսում է, կամ թե ծծում և սնվում են մարդու հյուսթերով ու արյունով: Իզուր չէ, որ ճիճուները պարազիտ են համարվում: Բայց սա դեռ բոլորը չէ: Գլխավոր վնասն այն է, որ ճիճուները, ինչպես այդ վերևում տեսանք, թույն են արտադրում: այդ թույնը ծծվում է արյան մեջ և նրա միջոցով տարածվում՝ է ամբողջ օրգանիզմում՝ աստիճանաբար և դանդաղորեն թունավորելով մարդուն:

Ճիշտ է, քանի ճիճուները կենդանի են, փոքր քանակու թյամբ են թունն արտադրում: Թունավորումը կատարվում է դանդաղորեն, ոչ միանգամից, աննկատելի սկսելով թեթև գլխացավով, անքնությամբ, արագ հոգնածությամբ, դեպի աշխատանքն ունեցած տհաճությամբ, սրտախառնությամբ, թքահոսությամբ, գիշերներն ատամները կրճտացնելով, այնուհետև այս բոլորին միանում է նաև փորի ցավեր, լուծ, փսխոց, արյան պակասություն: Երեխաների մոտ, որոնց վրա առանձնապես ուժեղ է ազդում թույնը, թուլանում է հիշողությունը: Նրանք սկսում են վատ սովորել, կամակորություններ անում, օրգանապես թուլանում են, դառնում դյուրագրգիռ, քնած ժամանակ վեր են թռչում, իսկ երբեմն նույնիսկ ցնցումներ և ջղաձգումներ են ունենում: Եթե իր ժամանակին ուշադրություն չդարձվի այս բանի վրա, երեխան կարող է մահանալ:

Բացի դրանից հարկավոր է մատնանշել, որ ճիճուները տեղավորվելով մարդու օրգանիզմի մեջ, ամրանում են իրենց գլխի վրա ունեցած ծծաններով և կարթերով այն օրգանին, որի մեջ ապրում են: Ծծաններով

կղզեերով և միաժամանակ ատամներն ու կարթերը խրե-
լով աղիքների պատերին՝ ճիճուները վիրավորում են
սլափը, և այդ վերքերի միջով աղիքների մեջ գտնվող
ուրիշ շատ վարակիչներ (օրինակ, բակտերիաներ), թա-
փանցում են մարդու օրգանների մեջ, առաջացնելով
զանազան վտանգավոր հիվանդություններ, ինչպես օրի-
նակ՝ արյունալուծ, զիզենտերիա, աղիքների տուբեր-
կուլոզ և այլն:

Իսկ եթե ճիճուները չափազանց շատ են, այդ
գեպքում կարող են առաջացնել աղիքների խցանում,
որ արդեն կարիք է լինում վիրահատության:

ԻՆՉՊԻՍԻ ՃԻՃՈՒՆԵՐ ԵՆ ԼԻՆՈՒՄ ԵՎ ԻՆՉՊԵՍ ԵՆ
ՆՐԱՆՔ ԱՊՐՈՒՄ

Ճիճուների այն տեսակները, որոնցով կարող է
վարակվել մարդը, շատ-շատ են: Աշխարհի տարբեր
մասերում մարդկանց մոտ հայտաբերված են մոտ 150
տեսակ զանազան ճիճուներ: Մեզ մոտ՝ Հայաստանում,
բնակչության մեջ հայտաբերված են ճիճուների 23
տարբեր տեսակներ:

Ճիճուները մարդու օրգանիզմում կարող են ապրել
ոչ միայն աղիքներում, այլ առանց բացառության բո-
լոր օրգաններում և հյուսվածքներում: Ճիշտ է, ճիճու-
ների գլխավոր մասսան ապրում է աղիքներում, բայց
կան և այնպիսիները, որոնք տեղավորվում են լյարդում,
երիկամներում, թոքերում, արյան մեջ և նույնիսկ
աչքի մեջ:

Իրենց մեծությամբ՝ ճիճուները շատ բազմազան
են: Նրանց մի մասը այնքան մալու է, որ հազիվ նկա-
տելի է հասարակ աչքով, իսկ մյուսները մի բանի մետր
երկարություն ունեն:

Իրենց տեսքով բոլոր ճիճուները կարող են բա-
ժանվել երկու մեծ խմբի՝ կյուր և սափակ:

Կյուր նիճուները երկարավուն են, սրված ծայրերով:
Ժողովուրդը նրանց անվանում է «քափանակ», բայց
խակալան անունը «ծծողներ է», որովհետև իրենց ծծան-
ների միջոցով ամուր կպչում և ծծում են:

Տափակ ճիճուներից, ամենից ավելի հաճախ, մեզ
մոտ պատահում են այնպիսիները, որոնք ժապավենի
ձև ունեն, այդ պատճառով էլ նրանք կոչվում են երի-
զորդներ կամ ժապավենաձև որդեր:

Կյուր ճիճուներով մեծ մասամբ մարդը վարակվում է
կանաչեղենի, բանջարեղենի, սրկերի, ջրի, հողի և զա-
նազան սննդամթերքն ընդ ու առօրյա գործածության
առարկաների միջոցով, որոնք կեցատուված են լինում
այս ճիճուների ձվերով: Իսկ տափակ ճիճուներով մարդը
վարակվում է տավարի, խոզի կամ ձկան մսի միջոցով:

Բոլոր ճիճուներն էլ բազմանում են ձու գնելով:
Թռչունների նման ճիճուները ձու են ածում այնտեղ,
որտեղ ապրում են: Բայց նրանց ածած ձվերի քանա-
կութունը չափազանց մեծ է: Ծիճուների մեծ մասը
օրական ածում է մի քանի տասնյակ հազարից մինչև
մի քանի հարյուր հազար ձու: Բայց այդ ձվերը շատ
մանր են, հասարակ աչքով անտեսանելի և նկատվում
են միայն մանրադիտակով: Ծիճուներն ունեն իրենց
լուրահատուկ ձվերը, հաճախ նրանք լինում են սսկե-
գույն, դեղին կամ դարչնագույն: Քանի որ ճիճուներից
շատերն ապրում են աղիքներում, հետևաբար աղիքները
մեջ ածած ձվերը արտաթորվում են կղանքի հետ միա-
սին: Դրա համար էլ կղանքը քննելիս կարելի է որոշել
թե ինչպիսի ճիճուներով է վարակված մարդը:

ՃիճճԻՆԵՐ, ՈՐՈՆՅ ՁՎԵՐՈՎ ԿԵՂՏՈՏՎԱԾ ԿԱՆԱԶԵՂԵՆԻ,
ԲԱՆՁԱՐԵՂԵՆԻ, ՄՐԻԵՐԻ, ՋՐԻ, ՀՈՂԻ ԵՎ ՁԱՆԱԶԱՆ
ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՄԻՋՈՅՈՎ ՎԱՐԱԿՎՈՒՄ Է ՄԱՐԴԸ

Ասկարիդը—*Ascaris lumbricoides*, կյո՞ր ճիճուներից
ամենամեծն է: Նրա երկարությունը հասնում է մինչև
20—35 սմ, սպիտակ կամ թեթևակի կարմիր գույն
ունի: Ասկարիդները մեզ մոտ խիստ տարածված են
մեծահասակների և առանձնապես երեխաների մեջ:
Գյուղացիների մոտ ասկարիդները ավելի հաճախ են
պատահում և ավելի մեծ քանակությամբ, քան քաղաքի
բնակչության մոտ: Վերջին տարիներս, պատերազմի
անբարենպաստ պայմանների հետևանքով, սսկարիդնե-
րով վարակվածությունն զգալիորեն ավելացել է:
Դրանք, այն ճիճուներն են, որ երբեմն թափվում են
կծիկներով:

Ասկարիդները լինում են արու և էգ: Նրանք աղ-
րում են մարդու բարակ աղիքներում: Արուն բեղմնա-
վորում է էգին և վերջինս ձու է ածում: Յուրաքան-
չյուր էգ ասկարիդ օրեկան ածում է մոտավորապես
200 հազար ձու: Քանի որ մարդու մոտ հաճախ լինում
են ոչ թե մեկ, այլ մի քանի տասնյակ և ավելի ճի-
ճուներ, ապա հեշտ է պատկերացնել, թե ամեն մի
մարդու կզանքի հետ ինչ մեծ քանակությամբ ձու է
դուրս գալիս օրվա ընթացքում: Մարդիկ շատ հաճախ
արտաքնոցից չեն օգտվում, այլ կզանքը թափում են
դուրս, հետևաբար ձվերը մնում են դեռևի վրա բակե-
րում, փողոցներում, աղիներում, բանջարանոցներում,
այսինքն այնտեղ, որտեղ խաղում են երեխաները, հա-
տուանում են պտուղներն ու բանջարեղենը: Ջուրը
ողողելով կզանքը, քափն ցրիվ է տալիս ձվերը, ճան-
ճերը փոխանցում են սննդամթերքներին, մարդիկ ոտ-

քերով տանում են իրենց բնակարանները, և վերջապես այդ ձվերը շատ հեշտությամբ կարող են ընկնել մարդու բերանը, երբ սուսեձնապես կեղտոտ ձեռքերով, չլվացած կանաչեղեն կամ սրբեր ենք ուտում:

Մարդու օրգանիզմից նոր դուրս եկած ասկարիդների ձվերը վարակիչ չեն: Ինչպես որ հավի ձվի մեջ ածելու պահին ձուտ չկա, այնպես էլ ասկարիդի ձվի մեջ սաղմ չկա: Հավի ձվի մեջ ձտի սաղմը զոյանալու և զարգանալու համար հարկավոր է, որ ձուն Յ շաբաթ մնա թխսի տակ, այնպես էլ ասկարիդի ձուն: Վերջինս պետք է դրսի տաք միջավայրում որոշ ժամանակ մնա, որպեսզի նրանում զարգանա փոքրիկ որդը: Այդ որդը ասկարիդի ձվի մեջ օր օրի վրա զարգանալով և ածելով, մոտավորապես մեկ ամիս հետո վարակիչ է դառնում: Եթե սյդպիսի ձուն մարդը կուլ տա, նրա աղիքներում դուրս կգա փոքրիկ որդը:

Ասկարիդի որդը շատ փոքրիկ է և քնքուռ: Նա չի կարող ապրել այն պայմաններում, ինչպիսի պայմաններում ապրում են նրա ծնողները, չի կարող սնվել աղիքների պարունակութունից: Նրան հարկավոր է հեղուկ սննդաբար միջավայր: Նա իր, գլխիկով սողում, անցնում է աղիքի պատի միջով և ընկնում է արյունատար անոթների մեջ և սկսում է սնվել արյունով: գնում է ախտեղ, ուր աանում է նրան արյունը՝ լյարդի, սրտի և վերջապես թոքերի մեջ: Երբ ընկնում է թոքերի մեջ, նա արդեն բավականաչափ մեծացած է լինուր և այլևս չի կարողանում տեղավորվել թոքային բարակ արյունատար անոթներում: Շարժվելիս նա պատում է անոթների պատը և ընկնում է բրոնխների մեջ: Բրոնխներից նա շարժվում է դեպի վեր և շնչափողի, կսկորդի ու կերակրափողի միջով վերադառնում է իր մշտական

բնակավայրը՝ աղիքները: Եվ սհա այժմ միայն, մոտ
2 շաբաթ արլան մեջ ապրելով, նա կարող է աղիքներ-
ըում աճել և զատնալ հասուն որդ՝ էգ կամ արու: Ձուռն
կուլ տալու պահից մինչև մարդու կղանքի մեջ ձվի
երևալը, անցնում է մոտավորապես երկու և կես ամիս:

Հասուն տակարիդները շատ անհանգիստ որդեր են:
Նրանք իրենց երեք շփունքանոց բերանով ամուր չեն
կպչում աղիքների պատերին և հաճախ շարժվելով ա-
ղիքներում՝ սուր դավեր են առաջացնում: Բարձրանա-
լով դեպի վեր, նրանք ընկնում են ստամոքսի մեջ, որը
կծկվելով դուրս է շլրաում նրանց բերանի միջով: Նը-
րանք երեխաների մոտ, այդ դեպքում, երբեմն ընկ-
նում են շնչափողը և առաջացնում են շնչարգելության
ժանր երևույթներ: Մողալով լյարդի մեջ, նրանք առա-
ջացնում են մի շարք ծանր հիվանդագին երևույթներ,
ինչպես են՝ սուր ցավեր, դեղնախտ, լեղաքարերի գո-
յացում և այլն:

Ասկարիդների արտադրած թույնը դանդաղորեն
թունավորում է մարդուն և հիվանդը գանգատվում է
թուլութունից, գլխացավից, սրտախառնությունից,
թքահոսութունից, երբեմն ել լինում է լուծ և վսխոց:
Ասկարիդները սողալով մտնում են նաև կույր աղիքի
որդանման ելուստի մեջ և առաջացնում են ցավոտ ապսն-
գիցիտ, որը պահանջում է վիրահատություն:

Ի՞նչ պես է սնել սակարիդներից չվարակվելու
համար: Ինչպես վերևում ասացինք, տակարիդները
մարդու օրգանիզմի համար շատ վնասակար ճիճուներ
են: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է ձեռք առնել բոլոր
տեսակի միջոցառումները, որպեսզի նրանցով մարդիկ
չվարակվեն: Ի՞նչ պետք է անել:

Մենք արդեն գիտենք, որ ասկարիդային վարակը՝

գա նրանց ձվերն են, իսկ ձվերը դուրս են գալիս միայն կղանքի հետ, հեռաւաբար հիմնականը և գլխավորն այն է. որ կղանքը ոչ մի դեպքում գետնի երեսին չմնա, որ յուրաքանչյուր մարդ անպայման օգտւի արտաքնոցից, կամ գոնե սովորական փոսից: Փոսերում ամեն ինչ փթում և քայքայվում է, այնպես որ 6—8 ամսովա ընթացքում ոչնչանում են նաև ասկարիդների ձվերը: Եթե բոլոր մարդիկ օգտվեն արտաքնոցներից և սորդու կղանքը գետնի երեսին, չմնա, այլ այդպիսին հավաքվի և լցվի ծածկված փոսերի մեջ, շատ ճիճուներ չեն լինի և մարդիկ կապտովեն վարակից: Այս բանը պետք է լավ հիշել և ազիտացիա տանել այնտեղ, որտեղ մարդիկ դեռ ապրում են հակասանլտարական և ոչ կուլտուրական պայմաններում:

Ճիճուների ձվերը շատ դիմացկուն են, նրանք չեն վախենում ոչ ցրտից և ոչ էլ անձրևից. նույնիսկ շատ թույլներ նրանց չեն սպանում, որովհետև նրանց կեղևը պատյանը շատ ամուր է: Ձվերը կարող են 5—6 տարի կենդանի մնալ գետնի վրա և այնպիսի թույլների լուծույթներում, որոնց մի կաթիլը երբեմն բավական է մարդուն սպանելու համար: Ձվերի վրա կործանիչ կերպով ազդում է հարավի աժառային տաք արևը, բայց նրանց զգալի մասը, այնուամենայնիվ, կենդանի են մնում բույսերի և շենքերի սավերում:

Ասկարիդ ճիճու ունեցողը պետք է անպայման բուժվի: Չպետք է մոռանալ, որ մարդը չբուժվելով, վնաս է հասցնում ոչ միայն իրեն, այլև իրեն շրջապատողներին, որովհետև սուսն օր նա հսկայական քանակույթյամբ ասկարիդային ձու է արտաթորում:

Քանի որ մեր շրջակայքում կան ասկարիդի վարա-

կիչ ձվեր, պետք է աշխատել որ այդպիսիները մեր բերանը չընկնեն, որի համար անհրաժեշտ է՝

1. Ավելի հաճախ լվանալ ձեռքերը, իսկ ուտելուց առաջ՝ անպայման: Առանձնապես պետք է հետևել երեխաներին և թույլ չտալ, որ նրանք խողան արտաքնոցի մոտերքուս:

2. Գործածելուց առաջ կանաչեղենն ու մրգեղենը լավ լվանալ:

3. Պայքարել ձանձերի դեմ և բաց չպահել ուտեղիքներն ու սննդամթերքը:

Մագազուխ ուղի—*Trichocephalus trichiurus*, 3—5 սմ. երկարություն ունի: Մեզ մոտ համարյա բոլորն էլ ունեն այդ որդից: Նրա գլխային մասը բարակ է և երկար ինչպես մագը, իսկ մարմինը կարճ ու հաստացած է, որի շնորհիվ էլ նա ստացել է իր անունը: Նա ապրելով մարդու կույր աղիքում և որդանման ելուստում, պինդ կպչում է աղիքի պատին, մտնելով նրա մեջ իր գլխային ծայրով, ինչպես թելած ասեղը: Երբ նա այդ ձևով խրվում է աղիքի մեջ, վիրավորում է այն շատ տեղերում և հենց դրանով էլ դուռ է բաց անում բակտերիաների մուտքի համար, որոնք վխտում են մարդու աղիներում: Այս կապակցությամբ երևան են գալիս լուծեր, փորի ցավեր, իսկ առանձին դեպքում ավելի ծանր հիվանդություններ, ինչպես օրինակ՝ ապենդիցիտը: Ամառային և աշնանային լուծերը հաճախակի կրկնվելու գործում, որոշ չափով սեղավոր է մագազուխ որդը: Այս որդի արտադրած թույնը շատ վատ ազդում է արյան և ներվային սիստեմի վրա: Մեծ քանակությամբ մագազուխ որդեր ունեցող մարդկանց մոտ կարող են զարգանալ խիստ արյան պակասություն, Դյուրագրգռություն, երևան են գալիս գլխավտույտ,

գլխացապեր և ուրիշ ներվաչին երևույթներ, որոնք
 բնորոշ են, առհասարակ, որդերի թույնի համար: Էգ
 մագաղախները աղիքների մեջ ածոււմ են դեղնավուն-
 դարչնագույն ձվեր, որոնք իրենց ձևով շատ նման են
 փոքրիկ կիտրոններին: Արտաքին միջավայրում մագա-
 գլխի ձվի, ինչպէս և ասկարիդային ձվի մեջ, 1—2 ամ-
 սրվա ընթացքում զարգանում է փոքրիկ որդը: Այդպիսի
 ձուն կուլ տալու դեպքում մարդը վարակվում է: Նրա
 աղիքներում փոքրիկ որդը դուրս գալով ձվից, աղիք-
 ներում մեծանում և դառնում է հասուն որդ, առանց
 արւան մեջ անցնելու: Մագաղախով վարակվելու միջոց-
 ներն ու ուղիները նույնն են, ինչ որ ասկարիդներով
 վարակվելու ժամանակ: Այստեղ ևս մագաղախների
 դեմ մղվող պայքարում առաջնակարգ նշանակույթուն
 ունի արտաբնօցների առկայութունն ու նրանց մաք-
 րութունը, սանիտարական տեսակետից կուլտուրական
 սպրեյակերպը՝ ձեռքերի հաճախակի լվանալը, մրգերի
 և կանաչեղենի լվանալը, ճանճերի դեմ պայքարելը
 և այլն:

URINUS որդր—*Enterobius vermicularis*, կամ *O-*
xyuris vermicularis—շատ փոքրիկ ճիճու է: Էգի երկա-
 րությունը մոտ 4 մմ, իսկ արուն ավելի փոքր է, որք
 նման է ստորակետին: Էգ սրատուտներին հաճախ կարելի
 է տեսնել կղանքում՝ փոքրիկ սպիտակ թելերի ձևով:
 Շատերը կարծում են, թե զրանք փոքրիկ ասկարիդներ
 են, բայց դա սխալ է: Նրանք ինքնուրույն ճիճուներ
 են և երբեմն չեն կարող իրանց բնական չափից ավելի
 մեծանալ: Սրատուտները տարածված են ամբողջ աշ-
 խարհում, վարակելով ինչպէս մեծահասակներին, այն-
 պէս էլ երեխաներին, բայց երեխաների մոտ ավելի
 հաճախ են պատահում և շատ անհանգստություն են

պատճառում նրանց, որ արատ որդերն առանձնապես լինում են այն մարդկանց մոտ, որոնք խիտ-կուտակված են ապրում, միևնույն անկողնում մի քանի հոգով են քնում և այլն:

Ասկարիզի և մազադիլի նման սրատուտ որդերը ևս ապրում են աղիտներում, բայց մի տարբերութ չստանալով նրանք ձուն աղիքների մեջ չեն ածում, այլ դուրս գալով հետանցքից, սողում են նրա շուրջը և ձուն ածում մաշկի վրա: Ասեմ մի ճիճու ածում է մտամորապես 12 հազար ձու: Մաշկի վրայով սողալու ժամանակ իրենց եռյթխնաքային բերանով կծում և անտանելի քոր են առաջացնում, որն առանձնապես խիտ զգացվում է երեկոները, երբ ավելի սեժ քանակութ յամբ ճիճուներ են դուրս գալիս: Շատ լինելու դեպքում նրանք դուրս են գալիս օրվա բոլոր ժամերին, որի պատճառով մարդ երբեք հանդիստ չի ունենում ոչ ցերեկը և ոչ էլ գիշերը: Մարդիկ դառնում են ներվային, գյուրազրգիտ: Առանձնապես խիտ տառապում են երեխաները, որոնք քորի պատճառով երեկոները երկար ժամանակ չեն կարողանում քնել, գիշերներն անհանդիստ են, ցնցվում են, վեր են թռչում: Երեխաները նույնպես դառնում են շատ ներվային և կամակոր:

Խիտ քորի հետևանքով հիվանդների մոտ կարող է առաջանալ էկզեմա (կաշվի հիվանդություն), Աղջիկների մոտ ճիճուները մանում են սեռական անցքը, որի հետևաբայ էլ առաջանում է բորբոքում և սպիտակահոսություն: Հաճախ սրատուտ որդերը սանում են կույր աղիքի որդանման ելուստի մեջ և բորբոքում այն: Երեկանի վերաբուժական կլինիկաներում հեռացված որդանման ելուստների (ապենդիցիտ) 30 տոկոսի մեջ սրատուտեր են հայտարբերվել: —

Սրատուտ որդի ածած ձվերը 6 ժամից հետո արդեն վարակիչ են մարդու համար: Այդ ժամանակամիջյուցում նրանց մեջ զարգանում է թրթուռը: Քորելու ժամանակ ձվերն ընկնում են մարդու մասների վրա, եղունգների տակ և անզգուշության ու անուշադրության հետևանքով փոխադրվում բերանը:

Երեխաները հաճախ մատները ծծելու և եղունգները կրծելու հետևանքով՝ վարակը տանում են բերանը: Մարդու հետանցքից ձվերն ընկնում են սպիտակեղենի վրա: Սավանը սենյակում թափ տալիս ձվերը թափվում են հատակի, պատահանների, սեղանի, մանկական խաղալիքների վրա և այլն:

Սրատուտի կյանքը մարդու մոտ շատ կարճ է: Նա տարում է ընդամենը մոտ 3 շաբաթ, բայց մարդը ներանցից երբեմն տարիներով է տառապում: Այդ կատարվում է այն պատճառով, որ մարդիկ իրենք իրենց մըշտապես վարակում են: Եվ դա հասկնալի է, քանի որ էգի ածած մոտ 12 հազար ձվից տասնյակներ գուցե և հարյուրներ նորից, տարբեր ճանապարհներով, կարող են ընկնել մարդու բերանը:

Ինչ պիտի անել սրատուտ որդերից պաշտպանվելու համար: Կարելի է ասել, որ սրատուտները մեր «տնային» սլարազիսներն են, այսինքն այնպիսիները, որոնցով մենք վարակվում ենք հենց տանը՝ տնային առարկաների միջոցով, կամ ինքներս՝ մեզ: Այդ պատճառով էլ նրանցից պաշտպանվելու միջոցներն այլ են, քան ասկարիզներից և մազազուլսներից պաշտպանվելու միջոցները:

Անհրաժեշտ է՝

1. Երեխաներին քնեցնել ջուկ-ջուկ, առանձին անկողնում և հետևել, որպեսզի քնած ժամանակ երեխաների ձեռները միշտ վերմակից դուրս լինեն:

2. Հետևել, որպեսզի երեխաները ձեռք չտան սեռական օրգաններին:

3. Միատեմատիկ կերպով կարելի ձեռքի եղունգները:

4. Ամեն օր, առավոտները, լայ թափ տալ անկողնի սպիտակեղենը ոչ թե սենյակում, այլ սենյակից դուրս:

Իսկ եթե մարդն արդեն վարակված է սրճատուտ որդով, նոր ինքնավարակումից խուսափելու համար հարկավոր է՝

1. Երեկոները քնելուց առաջ սենյակի ջրով հասարակ հոգնա գնել, որպեսզի ջրի հետ հեռացվին ճիճուները և հնարավորութունն չարվի նրանց դուրս գալ և ձու ածել: Այս միջոցը միևնույն ժամանակ ապահովում է մարդուն գիշերային քորից:

2. Գիշերները հագնել խիտ կտորից կարված վարտիկ, որպեսզի ակամա քորելու զեպքում, որ երբեմն կարող է լինել նաև քնած ժամանակ, ձեռքերը չկեղտոտվեն ձվերով և բերանը չտարվեն: Ամեն օր պետք է փոխել վարտիկը, լվանալ և հարթուկել թարս երեսից:

3. Ամեն օր առավոտները՝ ինչպես և երեկոները, հոգնայից հետո տաք ջրով և օձառով լվանալ հետանցքը և հեշտոցը՝ վարակիչ ձվերը մաշկից հեռացնելու համար:

Այս բոլորի հետ միասին անհրաժեշտ է գիմել բժշկին՝ ճիճվային դեղ ստանալու համար:

Մազանման նիճուկ — *Trichostrogylus* sp. — սրատուտից քիչ փոքր է և շատ ակելի բարակ, ինչպես մազը: Մազանման ճիճուները ոչխարների և այծերի պարզիտներն են, որոնց մոտ նրանք ապրում են ստամոքսում և բարակ աղիքի վերևի մասում: Սեղ մոտ ոչխարներն ու այծերը շատ խիտ վարակված են այդ ճիճուներով: Մազանման ճիճուների ձվերը կենդանիների արտաթորանքի հետ դուրս գալով որոշ ժամանակ մնում

են աղբում, և հետո առաջանում են հասարակ աչքի համար անտեսանելի որդեր: Այդ թրթուռ-որդերը բարձրանալով խոտերի ցողունների վրա, այնտեղ էլ ապրում են: Ոչխարներն ու այծերը արոտավայրերում արածելիս վարակվում են այդ խոտից: Մարդը կարող է նույնպես վարակվել խոտի և կանաչեղենի միջոցով, բացի դրանից թրթուռները կարող են մարդու մարմնի մեջ անցնել նաև առողջ մաշկի միջոցով՝ ոտաբորելի ման գալիս, կեղտոտ ջրով (առուների, լճակների) լվացվելիս:

Այս փոքրիկ որդերն ապրելով մարդու ապիքներում, սնվում են նրա արջուկով, որի հետևանքով մարդու մոտ զարգանում է արյան պակասություն և ստամոքսաաղիքային խանգարումներ: Մազանման որդերը հաճախ վարակում են երեխաներին: 1

Մազանման ճիճուները մեզ մոտ, գլխավորապես, պատահում են այն շրջաններում, որտեղ զարգացած է ոչխարաբուծությունը: Այդ շրջաններում վարակը կատարվում է արոտի միջոցով:

Քանի որ վարակի միակ աղբյուրը հանդիսանում է մանու եղջերավոր անասունների արտաթորանքը, հետևաբար ամեն մի շփում վերջինի հետ և այն տեղի հետ, որտեղ մնում է անասունը, կարող է վարակ առաջացնել: Մի քանի շրջաններ մասնկատան երեխաների վարակվածությունը բացատրում են նրանով, որ այդ մանկատների բակերի միջով անցնում է ոչխարների հոտը և կեղտոտում, որից հետո խաղալու են գալիս 4—6 տարեկան երեխաները:

1 Վարակումից խուսափելու համար անհրաժեշտ է՝

1. Ոչխարներին և այծերին պահել առանձին համայնական կոլխոզային գոմերում:

2. Թույլ չտալ, որպեսզի այծերի և ոչխարների

հոտն առջևի առաջին հերթին մանկական հիմնարկների՝ մանկամսուրների, մանկապարտեզների և դպրոցների բակերի միջով և կեդտտտի այն:

3. Ըստ հնազավորության աթարը փոխարինել որևէ ուրիշ վառելանյութով (փայտ, քարածուխ, տորֆ) և ոչ մի դեպքում գոմաղբը չուսարսնակ ձեռքով՝ այն էլ բնակելի շենքերի մոտ:

1 ✓ Թզուկ Երիզորդ — *Hymenolepis nana*: Թզուկ երկզորդը տափակ որդ է: Նա կազմված է ինչպես տավարի և խոզի մեծ չափերի հասնող երիզորդը, առանձին հատվածներից, սակայն տարբերվում է իր չնչին մեծությունը (եկ և կեսից մինչև երեք ս.մ.), որի սլատճառով էլ ստացել է «թզուկ» անունը:

Այս երիզորդն իր գլխի վրա ունի 4 ծծաններ և 20—30 կարթեր: Տարածված է գլխավորապես երեխաների մեջ: Ապրելով բարակ աղիքներում՝ ծծաններով և կարթերով ամուր կպչում է աղիքի լորձաթաղանթին՝ Երբեմն նրանց քանակն հասնում է մի քանի հարյուրից մինչև մի քանի հազարի: Այս դեպքում «թզուկները» կարող են առաջացնել աղիքի լորձաթաղանթի բորբոքում: Երեխաներն սկսում են դանգատվել փորի սուղլցավերից: Նրանց մոտ նկատվում է ախորժակի բացակայում և լուծ՝ երբեմն արյունալորձային: Բացի այդ, որդի առաջացրած թուլյնը ազդում է նաև երեխայի ներվային համակարգության վրա և երեխան դառնում է անհանգիստ, գանգատվում է գլխացավից, վատ է քնում:

Թզուկ երիզորդ ունեցող մարդիկ կդանյի հետ արտաթորում են սաղմեր պարունակող ձվիկներ: Այդ պատճառով էլ նման մարդիկ վարակիչ են ինչպես շրջապատի, այսպես էլ իրենց համար (կրկնավարակման իմաստով): Թզուկ երիզորդով վարակվելուց պաշտպանվելու համար

պետք է ձեռնարկվեն նույն միջոցառումները, ինչպիսին տարվում են ասկարիդի և մագագլուխ որդերի դեմ: Հատկապես պետք է զգուշանալ թզուկ երիզորդով վարակվելուց դպրոցներում, մանկ սպարտեզներում և մանկամսուրներում, որտեղ երեխաների մեջ հղած շփումը շատ ավելի մեծ է: Մանկական հիմնարկներում երեխաներին անհրաժեշտ է ապահովել անհատական սրբիչներով, ավսեններով, բաժակներով, գդալներով և այլն: Անհրաժեշտ է և երեխաներին քնեցնել առանձին անհողիներում և առանձնապես ուշադրութուն դարձնել տակամանների մաքրության վրա:

Վերջին տարիների հետազոտությունները՝ դպրոցական և նախադպրոցական երեխաների մեջ, ցույց են տալիս, որ նրանց վարակվածությունը թզուկ երիզորդով զգալի չափով իջել է: Այդ պետք է վերադրել սանիտարական պայմանների լավացմանը:

✓ էխինոկոկը — *Echinococcus granulosus* փոքրիկ տափակ, ժապավենաձև ճիճու է, որը մեծ քանակությամբ ապրում է շան բարակ աղիքներում: Շան կրղկըզանքի հետ դուրս են գալիս էխինոկոկի ձվերը և տարածվում ամեն տեղ՝ բակերում, բանջարանոցներում և արոտավայրերում: Ընտանի կենդանիները (կովեր, եզներ, ոչխարներ) արոտավայրերում կամ բակում վարակվում են էխինոկոկի ձվերով, որոնք աչքի համար շատ անտեսանելի են: Մարդը նույնպես կարող է վարակվել այդ ձվերով: Սրինակ, շներն իրենց հետանցքը լիզելիս դնչի ու մագերի վրա են սեղափոխում ձվերը: Հիվանդ շունը շփելով առողջ շան հետ վարակում է նրան: Իսկ մարդը շոյելով շանը, իր ձեռքերը կեցատուում է այդ ձվերով և չվացած ձեռքերով մի բան ուտելիս՝ վարակվում է: Բացի դրանից շունը շատ հա-

ճախ լիջում է իր տիրոջ ձեռքերն ու երեսը: Երեխաները վարակվում են շների հետ խաղալիս, մանավանդ, եթե համբուրում են շանը:

Էխինոկոկի ձվերը բերանի միջով ընկնում են մարդու և անասունների աղիքների մեջ: Աղիքներում այդ ձվերից դուրս են գալիս փոքրիկ թրթուրներ, որոնք ասկարիզ թրթուրի նման անցնում են արյան մեջ, ապա տարածվում ներքին օրգաններում, ամենից հաճախ լյարդի կամ թոքերի մեջ, երբեմն էլ երիկամների, ուղեղի, սուկորների մեջ: Այդ օրգաններում թրթուրը կամաց-կամաց աճում և վերջի վերջո դառնում է մեծ քանակությամբ սաղմեր պարունակող հեղուկով լցված էխինոկոկի մի խոշոր բշտիկ: Հաճախ այդ բշտիկները իրենց չափերով հասնում են նորածին երեխայի գլխի մեծութան: Եթե շունը էխինոկոկի բշտիկը ուտի նրա աղիքներում սաղմերից կառաջանան մեծ քանակությամբ երիզորդներ: Հետևաբար, չպետք է մոռանալ, որ թե մարդիկ և թե անասունները էխինոկոկով վարակվում են միմիայն շներից, իսկ շները՝ էխինոկոկի բշտիկներ ունեցող կենդանիներից են:

Շներին երբեք չպետք է կերակրել էխինոկոկով վարակված կեղծանիների մսով: Այդ պատճառով էլ սպանդանոցներին կից չի թույլատրվում, ընդհանրապես, շներ պահել:

Կ. Այս հիվանդութունը շատ վտանգավոր է նաև մարդու համար: Մարդը նիհարում է, սակավարյուն դառնում, գանգատվում է թուլութունից և ցավից: Եթե բշտիկը գտնվում է լյարդում, հիվանդի մոտ կարող է առաջանալ դեղնախտ և ջրզոդութուն: Էխինոկոկից կարելի է բուժվել միմիայն վիրահատության միջոցով:

• Էխինոկոկով չվարակվելու համար անհրաժեշտ է՝

1. Մատիկ շփում չունենալ շների հետ և թույլ չտալ, որ պեսսի նրանք լիզեն մարդկանց ձեռքերն ու երեսը ինչպես և երեխաներին խստիվ արգելել խաղալու շների հետ:

2. Ոչնչացնել թափառող շներին, իսկ տնային շներին, ժամանակ առ ժամանակ, ցույց տալ անասնաբուժին, որ պեսսի նա ստուգի՝ թե շունը վարակված չէ՞ արդյոք էլսինոկոկով, հակառակ դեպքում, ենթարկել բուժման:

3. Էլսինոկոկի բշտիկներով վարակված կենդանիների մոտով ոչ մի գեպքում շներին չկերակրել, որովհետև շունը վարակվելով կվարակի նաև իր շրջապատը:

**ՃԻՃՈՒՆԵՐ, ՈՐՈՆՅՈՎ ՄԱՐԴԸ ՎԱՐԱԿՎՈՒՄ Է ՄՍԻ ԵՎ
ԶԿՍՆ ՄԻՋՈՅՈՎ**

1 Ճիճուների շտրքին են պատկանում երիզորդները կամ ժապավենաձև որդերը:

Վերջիններս բնորոշվում են նրանով, որ իրենց կյանքի ընթացքում ունեն երկու ձև:

1) Սկզբնական շրջանում երիզորդները ապրում են որպես թրթուրներ տավարի, խոզի կամ ձկան մսի մեջ, որտեղ այդ թրթուրները մոտ 1 սմ. մեծությամբ հնդուկով լցված սպիտակ բշտիկներ են: Սրանք կոչվում են ֆինն: Յուրաքանչյուր ֆինն-բշտիկի ներսում նստած է երիզորդի գլխիկը: Հասուն որդը ապրում է մարդու ազիքներում և ժապավենի տեսք ունի: Ժապավենը բաղկացած է առանձին հատվածներից կամ սնդամիկներից: Մարդու մոտ ապրող որդերը մեծ մասամբ շատ երկար են լինում՝ 6—10 սեալ: Մեկ մարդու մոտ կարող է մի քանի հատ լինել:

Հայտաբերվել է դեպի, երբ մի կին՝ դեղ ընդունելուց հետո թափել է 150 երիզորդ:

Սյդ պարազիտներով մարդը վարակվում է արև ժամանակ, երբ ուտում է ֆիններով վարակված լավ շտապակված կամ եփած միս: Մարդու աղիքներում լիքը մարսվում է, որի հետ էլ նաև ֆինների պատյանը: Այսպիսով, որդի գլուխն ազատվելով նրան պարունակող բջաիկից, կաշում է աղիքի պատին և սկսում է սնվել ու աճել: Երկու ամսից հետո որդի պոչի կողմից սկսում են պոկվել որդի առանձին կտորներ՝ անդամիկներ և դուրս գալ մարդու հետանցքից: Սյդ կտորները մի որոշ ժամանակ սողում են մարդու մալմնի վրա, առաջացնելով չափազանց անդուրեկան զգացում: Այնուհետև որդի կտորները ընկնելով սպիտակեղենի վրա տարածվում են ամենուրեք: Ամեն մի անդամիկ իրենից ներկայացնում է փոքրիկ տոպրակ՝ լցված երիզորդի հսկայական քանակությամբ ձվերով: Եթե այդ անդամիկը կուլ տա խոշոր եղջերավոր անասունը կամ խոզը, նրանց մսի մեջ ֆիններ կգարգանան:

Մեզ մոտ Հայաստանում, բացի տավարի և խոզի երիզորդից գոյություն ունին նաև ձկան երիզորդ: Հայաստանի ձկները զեռևս այդ ճիճուներով վարակված չեն:

Վճավարի երիզորդ — *Taeniarhynchus saginatus*, ունի 6-8 մետր երկարություն: Նրանով մարդը վարակվում է խոշոր եղջերավոր անասունների ֆիննոզ մսի միջոցով: Տավարի մսի մեջ ֆինները կարելի է հասարակ աչքով տեսնել, եթե միայն ուշադրությամբ նայելու լինենք:

Մսի մեջ ֆինները նման են ճարպի փոքրիկ զրնգիկների, իսկ երբ հանում են մսից (նրանք շատ հեշտությամբ հանվում են), այն ժամանակ նրանք նման են սխեռի փուճ կճեպի, միայն քիչ ավելի երկարացած

տեսք ունենայ) ներսում երևում է մի փոքրիկ սպիտակ բիծ՝ ապագա որդի հասուն գլուխը: Եթե մատների արանքում սեղմենք այդ բշտիկը, գլուխը դուրս կալըծնի: Մանրադիտակի տակ նրա վրա երևում են 4 հատ կլոր բծաններ որոնցով ճիճունն ամուր կպչում է աղիքի պատին: Ճիճվից ազատվելու համար անհրաժեշտ է, որ գլուխը սրկվի, դուրս գա: Եթե ճիճունն անջատվում է գլխից, իսկ գլուխը մնում է աղիքի մեջ խրված, նա նորից աճում է բուժումից երկու ամիս անց՝ սկսում են նոր առաջացած անդամիկներ դուրս ընկնել: 1

Կզան (տավարի) երիզորդ ունեցող մարդը չի կարող չիմանալ այդ մասին, սրովհետև անդամիկները ինքնուրույն կերպով դուրս են գալիս թե ցերեկը և թե գիշերը: Նիվանդը զանգատվում է կիժքի տակ զգացվող ծանրութուկից, դառնում է սակավարյուն, շատ է ուտում և երբեք չի կշտանում, որովհետև սննդի զգալի մասը նա տալիս է իր պարազիտին: 1 Եթե երիզորդով վարակված մարդը արտաքնոցից չի օգտվում, այլ դուրս է գնում բանջարանոցում կամ գոմում, նա այնտեղ թողնում է ձվերով լցված անդամիկները, վարոնցով կարող են վարակվել խոշոր եղջերավոր անասուններ:

1 Սոգի երիզորդը — *Taenia solium* մի քիչ ավելի կարճ է եզան երիզորդից, և հասնում է 3-4 մետր երկարություն: Նրա անդամներն ինքնուրույն կերպով դուրս չեն գալիս աղիքներից, այլ մեծ մասամբ՝ կղանքի հետ: Երբեմն կտրվում և միանգամից դուրս է ընկնում ճիճվի կես մետր երկարությամբ մի մեծ կտոր: 1

Երիզորդով հիվանդ մարդը վարակվում է ֆիններ պարունակող խոզի մախի:

1 Նիվանդագին երևույթները նույնն են, ինչ որ եզան երիզորդի ժամանակ: Բայց խոզի երիզորդը մարդու հա-

մար շատ ավելի վնասնգտվոր է, քան եզանր, որովհետև նա մարդու մոտ ապրում է ոչ միայն ժապավենի, այլև Ֆլինների շրջանում: ԳՖինները մարդու մոտ զարգանում են այն դեպքում երբ ճիճվի ձվերը կերակրի հետ ընկնում են մարդու ստամոքսը, և կամ երբ անդամիկները ճիճվով հիվանդի աղիքներից ստամոքսի մեջ են անցնում փսիսելու ժամանակ:

Ֆինները մարդու մոտ զարգանում են ոչ միայն մկաններում, ինչպես խոզի մոտ, այլև ուղեղում, աչքի մեջ, առաջացնելով շատ ծանր հիվանդություններ՝ խիստ գլխացավեր, ջղաձգումներ, պարալիզներ, երբեմն կուրուլթյուն:

Ուղեղային ախտահարման դեպքում հիվանդությունն անբուժելի է և սովորաբար վերջանում է հոգեկան խանգարումներով ու մահով: 1

✓ Չկան երիզորդը— *Diphyl obothrium latum*, ամենաերկատն է բոլոր երիզորդներից: Նրա երկարությունը հասնում է մինչև 10 մետրի և ավելի: Մարդը նրանով վարակվում է ոչ բավականաչափ լավ տապակած, եփած կամ աղը դրած (սակավաղ) ձկան միջոցով:

Չկան ներսում և նրա մկաններում կարելի է տեսնել փոքրիկ բարակ, սպիտակ սրդեր, որոնք հանդիսանում են մարդու աղիքների մեջ ապրող այսան երիզորդի թրթուրները: Մարդու աղիքներից բացի նա կարող է ապրել նաև շների և կատուների աղիքներում: Ի տարբերություն եզան և խոզի երիզորդներից, ձկան երիզորդի անդամիկները չեն անջատվում և դուրս չեն թափվում, այդ պատճառով հիվանդը կարող է չիմանալ, որ ինքը վարակված է: Չկան երիզորդը շատ վտանգավոր և վնասակար սլարապիտ է: Նա առաջացնում է արյան սլակասություն, մարդը թուլանում է, գունատվում,

շատ շուտ հոգնում, նիհարում, գանգատվում է գլխացավից, որոշ դեպքերում նկատվում են ծանր ներվալին խանգարումներ: Որպեսզի ձուկը չվազակվի. որդի թըրթուրներով, հարկավոր է մարդու կղանքը, որը հսկայական քանակությամբ ձու է պարունակում, չընկնի ջրի մեջ: Ոչ մի դեպքում արտաքնոցները զետուրի ափին չկառուցել և կեղտոտութուններ չթափել գետերի մեջ:

Տրիխինելլա—*Trichinella spiralis*: Խոզի մսի միջոցով մարդը կարող է վարակվել ծանր ճիճվալին հիվանդությամբ՝ տրիխինելլոզով, որն ուղեկցվում է բարձր ջերմաստիճանով: Շատ նման է սուր վարակիչ հիվանդության: Տրիխինելլի փոքրիկ թրթուրները, որ հասարակ աչքով տեսնել չի կարելի, գտնվում է խոզի մսի մեջ, նրանք այնտեղ տեղավորված են պատյաններէ մեջ սպիրալաձև, կծկված վիճակում:

Երբ մարդը տրիխինելլով վարակված խոզի միս է ուտում, թրթուրներն սկսում են մարդու աղիքներում աճել, մեծանալ և դառնալ հասուն որդեր: Բեղմնավորված էգ որդը մտնում է աղիքի մեջ, և նրանից ծնված մոտ 10 000 մանր թրթուրներ անմիջապես թափանցում են արյան անոթները: Արյան հետ այդ թրթուրները տարածվելով մարդու ներքին օրգանները, կանգ են առնում մկաններում և սկսում են մեծանալ՝ զսպանակի ձև ընդունելով ու ծածկվում են պատյանով ճիշտ այն-նես, ինչպես խոզի մսի մեջ:

Հիվանդութունն սկսվում է փորի ցավերով, լուծով և փոքր ջերմությամբ: Հետո ջերմութունը խիստ բարձրանում է, երևան է գալիս ուժեղ գլխացավ, դեմքի, իսկ երբեմն էլ, ամբողջ մարմնի այտուցք: Հիվանդը ցավեր է զգում մկաններում, մանավանդ ձեռքերի ու ոտների մկաններում: Նա դժվարությամբ է շնչում: Թեթև

գեպրերում հիվանդութիւնը շարունակվում է մոտ մեկ ամիս, իսկ երբեմն ձգձգվում է մինչև 2-3 ամիս, լինում են և մահվան դեպքեր:

Տրիխինելլայով չվարակվելու համար, պետք է գործածել միայն անասնաբույժի կողմից ստուգված խոզի միս: Տրիխինելլաները շատ դժվար է սպանել մսի մեջ: Մառցանելը նրանց վրա բոլորովին չի ազդում: Միսը եփելու կամ տապակելու ժամանակ՝ տրիխինելլաների զգալի մասը կենդանի են մնում:

ՃԻՃՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԵԼՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

1. Մարդու կղանքը գետնի երեսին չպետք է մնա: Թուր բակերում կառուցել արտաքնոցներ: Արտաքնոցները պահել մաքուր վիճակում և միջոցներ ձեռք առնել, որ բնտանի կենդանիները չկարողանան մոտենալ մարդու կղանքին: Անհրաժեշտ է լսատորեն հետևել, որպեսզի կղանքով չկեղտոտվեն բակերը, գոմերը, այգիներն ու բանջարանոցները, ինչպես և փողոցները:

2. Հետևել, որպեսզի ջրամատակարարման աղբյուրները մաքուր պահվեն և նրանց մոտերքում արտաքնոցներ չկառուցվեն:

3. Թարմ կղանքը չօդտազործել որպես բանջարանոցների պարարտացման նյութ: Այդ նպատակի համար կարելի է օգտագործել այն կղանքը, որը մնացել է արտաքնոցների փոսերում ոչ պակաս, քան ութ ամիս:

4. Ճանճերի դեմ պայքարելու համար հետևել, որ բակերը մաքուր լինեն և բնակելի շենքերի մոտ աղբ չկուտակվի (աղբը հավաքել հատուկ պատրաստած փակ արկղներում): Մենդամթերքները բաց չթողնել:

5. Անհրաժեշտ է մաքուր պահել հասարակական հիմնարկները՝ հաճախ հատակը լվանալ խոնավ ջնջոցով

փոշին մաքրել, պարտավորեցնել բոլոր ներս մանողներին նախադասը ոտքերը մաքրել:

6. Պահպանել անձնական հիգիենայի կանոնները, հաճախ ձեռքերը սճառով լվանալ, իսկ արտաքինաց գնալուց հետո և մանավանդ ուտելուց առաջ ձեռքերն անպայան լվանալ, եղունգները կարճ կտրել:

7. Անհրաժեշտ է հսկողութուն սահմանել, որպեսզի բնակչութունը մից օգտվի միայն անասնաբույժի կողմից ստուգվելուց հետո:

8. Պարտադիր կերպով բուժել բոլոր ճիճու ունեցող մարկանց (Եծերին թե փոքրերին), որպեսզի նրանք վարակ չտարածեն:

9. Հիվանդանոցներում և պոլիկլինիկաներում կազմակերպել հանրամատչելի դասախոսութուններ և զրույցներ՝ պարագիտալին ճիճուների հասցրած վնասի և նրանցից պաշտպանվելու միջոցների մասին:

10. Ոչնչացնել թափառական շներին: Հետևել, որ անասնաբույժի կողմից խոտանված միսը և անասունների վարակված ներքին օրգանները շներին չտրվեն: Սպանգանոցների մոտ շներ չպահել:

Պատ. խմբագիր՝ Շ. Մ ա ր ե ո ս յ ա ն
Տեխ. խմբագիր՝ Ի Վ ա ր դ ա ն յ ա ն
Սրբագրիչ՝ Ս Ճ ա ն ն ի կ յ ա ն
Կոնսրու սրբագրիչ՝ Ն. Բալաբյան

Վ. 05488, պատ. 653, տիրաժ 3000, հեղին. 1,5 մ., տպագրական ջ մ.,
հանձնված է արտագրության 1/XI 48 թ. ստորագրված է տպագրության
21/XII 48 թ.

Հայկ. ՍՍՌ Մինիստրների Սովետին կից պոլիգրաֆ և հրատարակչ. վարչ.,
№ 1 տպարան, Երևան, Լենինի փողոց 65

